

ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Դեկտեմբերի 25-ին՝ երկուշաբթի, տոն «սրբոյն Ստեփաննոսի նախավկային և առաջին մարտիրոսին»:

Ս. Ստեփաննոսի տոնը Մայր Աթոռում միաժամանակ տոնն է հոգևոր ճեմարանի սարկավագ ուսանողների:

Մեծ տոնի առիթով Մայր Աթոռի սարկավագները իրենք են կատարում օրվա եկեղեցական երգեցողությանց ղեկավարությունը:

Այս տարի կրկնակի ուրախության և հոգեղից բերկրանքի առիթ էր հանդիսացել ս. Ստեփաննոսի տոնը հոգևոր ճեմարանի երեք ուսանողների սարկավագական ձեռնադրությամբ:

Դեկտեմբերի 24-ին՝ կիրակի օրը, Մայր տաճարում երեկոյան ժամերգությունից և նախատոնակից հետո, հոգևոր ճեմարանի տեսչության միջնորդությամբ և Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ, կատարվեց երեք նորընծաների կիսասարկավագական աստիճանի տվչությունը՝ ձեռամբ Մայր տաճարի փոխ-լուսարարապետ գեր. տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Այս ուրախ առիթով, նույն օրը, եկեղեցական արարողության ավարտին, հոգևոր ճեմարանի Ա լսարանի չորս ուսանողներ՝ Ղազարոս Կյուրեղյան, Վարդան Տեղեքյան, Ռաֆիկ Սաղոյան և Արմեն Ջիլավյան, տ. Հուսիկ սրբազանի տվչությամբ և օրհնությամբ ստացան ուրար կրելու իրավունք, իսկ Դ դասարանի ուսանողներ Խաչիկ Խաչատրյանը, Կտրիճ Ներսիսյանը, Ժիրայր Սիմոնյանը, Տրդատ Շահլամյանը, Արտաշես Մուշեղյանը, Տիգրան Սահակյանը և Արմեն Ջիլավյանը ստացան դպրության չորս աստիճաններ:

Դեկտեմբերի 25-ին՝ երկուշաբթի օրը, ս. Ստեփաննոսի սեղանի վրա հանդիսավոր ս. պատարագ մատուցեց տ. Հուսիկ եպիսկոպոսը և կատարեց սարկավագների ձեռնադրությունը:

Խարտավիլակի պաշտոնը կատարում էր հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը:

Ձեռնադրությունից հետո տեսուչ տ. Ներսես ծ. վարդապետը մի խրատական խոսեց՝ հանուն Վեհափառ Հայրապետի շնորհավորելով Մայր Աթոռի ինը սարկավագների տոնը:

Հավարտ ս. պատարագի բարեշնորհ Եղիշե, Հովհաննես, Գրիգոր, Սասուն, Վրեժ, Հովսեփ, Արարատ, Հովհաննես, Հակոբ սարկավագները հոգ. տ. Ներսես ծ. վարդապետի առաջնորդությամբ գնացին Վեհարան՝ աջահամբույրով իրենց հոգևոր Հոր՝ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունն ստանալու իրենց տոնի առիթով:

Հայոց Հայրապետը հայրական ջերմ սիրով բարեհաճեց ընդունել Իր հոգևոր զավակներին և հոգեղից մի խրատականով նրանց մի անգամ ևս զինեց իրենց ապագա ծառայության և առաքելության սուրբ տեսիլքով:

Ժամը 15-ին, ի պատիվ Մայր Աթոռի սարկավագների տոնի և ի մասնավորի երեք նորընծաների, հոգևոր ճեմարանի սեղանա-

տանը տրվեց ճաշկերույթ, որին մասնակցում էին Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը:

Նորընծա սարկավագներին շնորհավորում են տ. Հուսիկ եպիսկոպոսը և, հանուն Մայր Աթոռի միաբանության, հոգ. տ. Նարեկ վրդ. Ծաքարյանը:

Սարկավագներին ուղղված շնորհավորական ջերմ խոսքեր են ասում նաև ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող հոգ. տ. Ծնորհք վրդ. Գասպարյանը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմի անունից՝ Սամվել Անթոսյանը և վերակացու Սիմոն Հովիվյանը:

Վերջում նորընծա սարկավագների անունից շնորհակալական սրտագին խոսք է ասում Բ լսարանի ուսանող բարեշնորհ Հովհաննես սրկ. Գրվրգյանը:

Բարեշնորհ Արարատ սրկ. Գալստյանը ծնվել է Էջմիածնում 1950 թվականին: Վերջացնելով վեցամյա դասընթացները Միկոյանի անվան միջնակարգ դպրոցի, 196 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Հովհաննես սրկ. Գրվրգյանը ծնվել է Լիբանանի Թրիփոլի քաղաքում 1949 թվականին: Նախնական կրթություն ստացել է Խրիմյան Հայրիկի անվան վարժարանում: 1963 թվականի հոկտեմբերի 20-ին ընդունվել է հոգևոր ճեմարան:

Բարեշնորհ Հակոբ սրկ. Նալբանդյանը ծնվել է 1949 թվականին Բեյրութում: Նախնական կրթությունը ստացել է Մելքոնյան վարժարանում: 1965 թվականին ընդունվել հոգևոր ճեմարան: